

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ  
ԱՐՑԱԽԱՅԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐԸ XVIII ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
առենախոսության սեղմագիր**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների դոկտոր

Դանիելյան Է. Լ.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր

Չոբանյան Պ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու

Մկրտումյան Լ.Ա.

Առաջատար կազմակերպություն

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 15-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ.Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Հայոց պատմության առանցքային հիմնահարցերից է օտար բռնակալությունների դեմ հայ ժողովորի նղած ազատագրական պայքարը, որի միավորող և սնուցող ուժը տարբեր դարաշրջաններում եղել է հայոց ազատատենչ ոգին և հայրենասիրությունը: XVIII դարի առաջին տասնամյակներին հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարում արցախահայության ազատագրական գործողությունների համակողմանի ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375 թ.) օտար տիրապետության դեմ հայ ժողովորի ազատագրական ծգուտները կազմել են հաջողդ դարերի հայոց պատմության բովանդակության ու մեր ժողովորի կենսակերպի անբաժանելի նասը: Հայ ազատագրական միտքը ժամանակի ընթացքում ընդգրկեց Եկեղեցական միջավայրը, ազնվական և առևտորական հասարակախավերի լավագույն ներկայացուցիչներին: Եթե XV-XVII դարերում ազատագրական շարժման կազմակերպիչները հիմնականում Ս. Էջմիածնի կարողիկոսներն էին և Եկեղեցական միջավայրից դուրս եկած գործիչները՝ Աղքամարի Զաքարիա Գ կարողիկոսը, Ամենայն Հայոց կարողիկոսներ Ստեփանոս Ե Սալմաստեցին, Յակոբ Դ Զուղայեցին և ուրիշներ, ապա XVIII դարի առաջին տասնամյակներում հոգևորական նշանավոր գործիչների (Եսայի Հասան-Զալայան, Մինաս Վարդապետ Տիգրանյան և այլն) հետ մեկտեղ ազատագրական պայքարի գործում իրենց կարողություն ներդրումն ունեցան աշխարհիկ այնպիսի երևելի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Խորայել Օրին, Ավան հարյուրապետը, Ստեփանոս Շահումյանը, Դավիթ Բեկը, Պետրոս դի Սարգիս Գիլանեցը և այլոք:

Հայ ժողովորի ազատագրման ճանապարհը սկզբնապես տեսնելով օտար երկրների օժանդակության մեջ՝ հայ գործիչները, ի վերջո գիտակցելով սեփական ռազմական մարտունակության կարևորությունը և ապավինելով իրենց ուժերին, XVIII դարի 20-ական թվականներին կարողացան զինված պայքարի շնորհիվ կերտել հայկական պետականության իրողություններն Արցախում՝ Եսայի կաթողիկոսի, իսկ Սյունիքում՝ Դավիթ Բեկի գլխավորությամբ:

XVIII դ. առաջին տասնամյակների արցախահայության ազգային-ազատագրական պայքարի համակողմանի ուսումնասիրության խնդիրը, թիելով երիտասարդ սերնդին գաղափարական կուր հայեցակարգով և հայրենասիրական ոգով դաստիարակելու անհրաժեշտությունից, չափազանց արդիական է: Ազատագրական պայքարի կազմակերպման գործում Սայր Արռո Սուլը Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսության համագործակցության խորքային շերտերի վերհանումը կարևորվում է Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահպան նշանակությունն ընդգծելու առօսնով:

Հայ ազատագրական շարժման դասերը լավագույն կերպով ապացուցում են սեփական ուժերին ապավինելու անհրաժեշտությունը և հիմնավորում զինված պայքարի միջոցով հայրենիքը պաշտպանելու իրատեսական գործելակերպը: Այս ամենի փայլուն ապացույցը XX դարի վերջի Արցախի ազատագրական պայքարի արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրողությունն է:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԸ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:**

Ատենախոսության նպատակն է լուսաբանել XVIII դարի առաջին տասնամյակներին արցախահայության ազգային-ազատագրական պայքարը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները:

- Ներկայացնել XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի Արցախի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը, կառավարման համակարգը և այն մելիքական

տները, որոնց ներկայացուցիչները գլխավորում էին ազատագրական պայքարը:

- Կարևորել Յայ Առաքելական Եկեղեցու արևելյան թեմերն առաջնորդող Գանձասարի կարողիկոսության և նրա հոգևոր առաջնորդ Եսայի Հայան-Զալյասանի դերը ազատագրական պայքարի կազմակերպման և դեկավարման գործում:
- Պարզաբանել Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև Հայաստանի բաժանվածության պայմաններում արցախահայության զինված պայքարի համգամանքները:
- Ներկայացնել հայ ազատագրական ծրագրի նոր փուլի սկզբնավորման մեջ աշխարհիկ և հոգևոր գործիչների, Մայր Աթոռ Ս. Եջմիածնի և Գանձասարի կարողիկոսության համագործակցության կարևորությունը:
- XVIII դարի առաջին տասնամյակների հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող փաստագրական հարուստ նյութի հիման վրա պարզաբանել արցախահայության ազատագրական պայքարին օժանդակելու հարցում Ռուսաստանի շահագրգության իրական դրավագատճառները:
- Լուսաբանել XVIII դարի 20-ական թվականներին արցախահայության հերոսական դիմադրությունը և Արցախում ինքնիշխանության հաստատնան ուղղված ջանքերը:

### **ԱՍՏԵՎԱԽՈՍՈՒԹՅԱՍ ՄԵԹՈՂԱԲԱՍԱԿԱՍ ՔԻՄՔԸ:** Ատենախոսությունը

շարադրված է տարածույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող գրականության համադիր քննության, ներկայացված փաստերի պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրաօնամբ: Եզրահանգումները կատարված են փաստական նյութերի հետազոտության հիման վրա:

### **ԱՍՏԵՎԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԺԱՄԱԿԱԿՐՈՐԱԿԱՍ ՇՐՋԱՍԱԿԱՆԵՐԸ:**

Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընթացկում է 1699-1731 թվականները՝ ներկայացնելով ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի կառավարման համակարգը, սոցիալ-տնտեսական վիճակը և հոգևոր կյանքը, ազատագրական ծրագրի իրականացմանը նպաստող և խոչընդոտող հանգամանքները, Մայր Աթոռ Սուլբ Եջմիածնի հետ համագործակցությամբ Գանձասարի կարողիկոսության դերը ազատագրական պայքարի իրականացման գործում:

### **ԱՍՏԵՎԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԳԻՏԱԿԱՍ ՆՈՐՈՒՅԹԱՄ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՍ ՆՇԱԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Յայ պատմագիտության մեջ տարբեր ժամանակներում կատարվել են հետազոտություններ XVIII դարի առաջին տասնամյակների արցախահայության ազգային-ազատագրական պայքարի առանձին հարցերի վերաբերյալ: Առկա աշխատությունները վերաբերում են կամ ուսումնասիրվող ժամանակաշրջանի միայն մեկ հատվածին, կամ ազատագրական շարժման ներկայացուցիչներից միայն մեկի գործունեությանը: Կան նաև ուսումնասիրություններ, որոնք արված են միակողմանի, առանց փաստական տարաբնույթ նյութերի համադրման և ծցգրիտ վերլուծության, և միաժամանակ իրենց վրա կրում են խորհրդային ժամանակաշրջանի կնիքը: Յենց այդ պատճառով արդի պատմագիտության համար չափազանց կարևոր է ուսումնասիրվող ժամանակաշրջանում արցախահայության ազգային-ազատագրական պայքարի համակողմանի հետազոտությունը, ինչին և նվիրված է սույն ասենախոսությունը:

Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանվածության պայմաններում Ս. Եջմիածինն ստիպված էր գործել քաղաքական դժվարին պայմաններում՝ փորձելով հայության երկու հատվածներից որևէ մեկի վիճակն էլ ավելի չլուսնգել: Ստեղծված իրավիճակում հայ ժողովորի ազատագրական պայքարի կազմակերպման գործում կարևոր նշանակություն է կան ձեռք բերում հայկական պետականությունը մարմնավորող Արցախի և Սյունիքի մելիքությունները,

ինչպես նաև այդ գործում ղեկավար դեր ստանձնած՝ Յայ Առաքելական Եկեղեցու արևելյան թեմերն առաջնորդող Գանձասարի կարողիկոսությունը: Ս. Էջմիածինն ազատագրական պայքարում արտաքին հարաբերությունների ղեկավարությունը իրականացնում էր Գանձասարի միջոցով, քանզի Արցախը պահպանել էր ռազմական որոշակի հնարավորություններով օժոված իր իշխանական տները և արդեն նեօք փորձ ուներ Յայաստանի արտաքին կապերի իրականացման գործում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը XVIII դ. առաջին քառորդում եղել է ազատագրական պայքարի կողմնակից, պարզապես ստիպված է եղել գործել ժամանակի քաղաքական պայմաններին համապատասխան գգուշավորությամբ: Գիտակցելով հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում Գանձասարի կարողիկոսության կարևորությունը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մշտապես աջակցել է նրան՝ փորձելով ամեն կերպ ամրապնդել արցախահայության դիրքերը և բարձրացնել Արցախի հոգևոր քաղաքական կենտրոն Գանձասարի հեղինակությունը:

Գիտականից բացի ատենախոսությունն ունի նաև քաղաքական և գործնական նշանակություն: XVIII դարի առաջին տասնամյակների արցախահայության ազգային-ազատագրական պայքարի անաշառ ուսումնասիրությունը և կատարված հետությունները արդիական են և օգտակար: Ալտենախոսությունում արված եզրակացությունները կարող են օգտագործվել Յայոց պատմությանը նվիրված դասընթացներում և դասագրքերի համապատասխան քաժիններում:

**ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎ ՓՈՐՁՎՔՍՈՒԹՅՈՒՆԸ:** Ալտենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՅՅ ԳԱԱ պատմության հմատիտուտի Նոր պատմության բաժնի կողմից:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական 5 հոդվածներում, հանրապետական գիտաժողովներում ընթերցած գեկուցումներում:

**ԹԵՎԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՎԱԾՈՒԹՅԱՎ ԱՍՏԻճԱՆԸ (ԱՐՅՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՍՈՒԹՅԱՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ):**

XVIII դարի առաջին տասնամյակներին արցախահայության ազգային-ազատագրական պայքարի լուսաբանման համար ուսումնասիրության աղյուր են հանդիսացել հայկական, ռուսական և թարգմանաբար պարսկական ու թուրքական աղյուրները:

Ալտենախոսության համար կարևոր սկզբնաղյուր է ղեպքերի ականատես Գանձասարի կարողիկոս Եսայի Յասան-Զալալյանի երկը, որի մեջ արտացոլված է Յայոց աշխարհի և հատկապես Յայոց Արևելից կողմերի XVIII դարի առաջին տասնամյակների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը: Եսայի-Յասան Զալալյանն իր շարադրանքը հասցնում է մինչև 1722-1723 թթ., ինչից կարելի է եզրակացնել, որ օստար ուժերի դեմ մղվող պայքարի ընթացքում ստեղծված ներքաղաքական ծանր իրավիճակի պայմաններում Յասան-Զալալյանը հնարավորություն չի ունեցել շարունակելու սկսած գործը: Նա թողել է իր ժամանակաշրջանի ազգային պատմության համառոտ մի տեսություն, որը պատմագիտական բարձր արժեք է ներկայացնում: Ազատագրական շարժման վերաբերյալ վավերագրերը, դրանցում արծարծված հայրենասիրական ու ազատասիրական գաղափարները, որոնք տեղ են գտել Եսայի Յասան-Զալալյանի աշխատության մեջ, նպաստել են ազատագրական նտքի ու գործի հետագա զարգացմանը, ազատագրական շարժման գաղափարախոսության մշակմանը:

<sup>1</sup> Եսայի Յասան-Զալալյանց, Պատմութիւն համաօստ Աղուանից Երկրի, Յերուաղեմ, 1868 (այսուհետև՝ Եսայի Յասան-Զալալյանց):

Ազատագրական պայքարին նախորդած ժամանակաշրջանում Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի ուսումնասիրության առունով կարևոր են Զաքարիա Քանաքեռոցու աշխատության<sup>2</sup> մեջ տեղ գտած տեղեկությունները պարսկական իշխանությունների՝ 1699 թ. նոր հարկահանության պատրվակով կատարված դաժան միջոցառումների և հայ ժողովրդի տարբեր խավերի կրած հալածանեների մասին:

Սերյուրագիտական արժանահավատությամբ պատմիչների երկերին չեն զիջում XIII-XVIII դդ. մանր ժամանակագրությունները<sup>3</sup> և XV-XVII դ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները<sup>4</sup>, որոնցում առկա հիշատակությունները օգնում են պատկերացում կազմել ուսումնասիրվող ժամանակաշրջանի տարբեր իրադարձությունների պատճառահետևանքային մանրամասների վերաբերյալ:

Արցախի մելիքների և Գանձասարի կարողիկունների գործունեության մանրամասնությունների ճշգրտման առունով ատենախոսության համար արժեքավոր է Ս. Բարիտուղարյանի կազմած վիմագիր արձանագրությունների ժողովածուն<sup>5</sup>:

Ինչպես ազատագրական պայքարի մանրամասների, այնպես էլ 1720-ական թվականներին Պարսկաստանում տիրող իրավիճակի նկարագրության առունով արժեքավոր է ազատագրական պայքարի նշանակոր գործիչ, Պետրոս Լի Կասպիական արշավանքի ժամանակ հայկական հեծյալ ջոկատի, իսկ այնուհետև միացյալ Հայկական Էկադիոնի իրամանատար Պետրոս դի Սարգիս Գիլանենցի կողմից կազմված և Նոր Չուղայի բարբառով գրված ընդարձակ տեղեկագիրը<sup>6</sup>: Լինելով իրադարձությունների ոչ միայն ականատեսը, այլև անմիջական մասնակիցը՝ Գիլանենցին հաջողվել է տալ այդ ժամանակի ամենակարևոր իրադարձությունների հավաստի նկարագիրը:

Ատենախոսության շարադրման համար անշափ կարևոր է Կ. Եզյանի (Ղ. Էզօն) կազմած վավերագրերի ժողովածուն<sup>7</sup>, որտեղ ի մի են բերված բազմաթիվ վավերագրեր, նամակներ ու պաշտոնական փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել XVIII դարի առաջին տասնամյակներում հայ-ռուսական հարաբերությունների և ազատագրական պայքարի կազմակերպմանն ուղղված ծրագրերի մասին: Ժողովածուի մեջ զետեղված են Խորայել Օրիի, Եսայի Հասան-Զալայանի, Մինաս Վարդապետ Տիգրանյանի և այլոց կողմից տարբեր ժամանակներում Պետրոս Սեծին և ռուսական արքունիքին ուղղված նամակներն ու դիմումները և այլ արժեքավոր փաստաթղթեր: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Խորայել Օրիի և Եվրոպական արքունիքների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցությունները հաստատող փաստաթղթերը, դեսպանական հաճնարարագրերը և այլն:

Խորայել Օրիի ազատագրական պայքարի կազմակերպմանն ուղղված գործունեությունը լուսաբանող տեղեկությունները ամբողջանում են շնորհիվ Կ. Եզյանի կողմից արտասահմանյան դիվաններում գտնվող թղթակցությունների,

<sup>2</sup> Զաքարեայ Սարկասագի պատմագրութիւն, հ. Ա, հ. Բ, Վաղարշապատ, 1870 (այսուհետև՝ Զաքարիա Սարկասագ, հ. Ա, հ. Բ):

<sup>3</sup> Սանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II, կազմեց Վ. Ա. Շակորյան, Ե., 1956:

<sup>4</sup> Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարանները, հ. Գ (1641-1660): Կազմեց Վ. Շակորյան, Ա. Շովհաննիսյան, Ե., 1984:

<sup>5</sup> Դիվան հայ վիճակության, պրակ Վ, Արցախ, կազմեց Ս. Բարիտուղարյան, Ե., 1960:

<sup>6</sup> Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ջուղայեցոց բարբառով գրված, Կոռուկ Յայց Աշխարհին, 1863, N 2-3:

<sup>7</sup> Էզօն Ղ., Չոսանիա Պետրա Յանձնական ազգային պատմություն, ՍՊԲ., 1898.

նամակների, դիմումների և գրվածքների վերհանման ու իրենց բնագրական լեզուներով հրատարակման:

Ազատագրական պայքարին նախորդած և խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-ռուսական առնչությունների ուսումնասիրման առումով արժեքավոր են տարեք տարիներին լույս տեսած փաստաթղթերի ժողովածուները<sup>8</sup>, որոնք հստակ պատկերացում են տալիս հայ ազատագրական պայքարի գործիքների և ռուսական կառավարության միջև եղած նամակագրական կապերի վերաբերյալ և վկայում են հայ-ռուսական առևտրատնտեսական և քաղաքական հարաբերությունների մասին:

Հայ ժողովրդի ազատագրման և անկախ պետականության վերականգնման ուղղված գործում կարևոր դեր է խաղացել Հայ Առաքելական Եկեղեցին: Սիմեոն կաթողիկոս Երևանցու երկում<sup>9</sup> խնդրո առարկա հարցի կապակցությամբ տեղ են գտել XVIII դարի առաջին տասնամյակներում Հայ Առաքելական Եկեղեցու հետ կապված կարևորագույն հրադարձությունների մասին տեղեկությունները: Արժեքավոր են հատկապես Հայ Եկեղեցուն պարսկական իշխանությունների կողմից տրված հրամանագրերի և հայ գյուղացիության սոցիալական վիճակի վերաբերյալ «Զամբռ»-ի տեղեկությունները: Ատենախոսության շարադրման համար հատկապես կարևոր նշանակություն է ունեցել աշխատության տասներորդ գլուխը, որտեղ Սիմեոն Երևանցին անդրադարձել է Գանձասարի կաթողիկոսությանը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի Պարսկաստանի պատմության, ինչպես նաև Ամենայն Հայոց և Գանձասարի կաթողիկոսների արռօքակալության, նրանց իրավունքների և արտոնությունների, Արևելյան Հայաստանի տարարնույթ խնդիրների, հատկապես սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության առումով կարևոր են Սատենադարանի պարսկերեն վավերագրերն ու հրովարտակները, որոնք քաղաքանմբել և հրատարակության են պատրաստվել Յ. Փափազյանի և Ք. Կոստիկյանի կողմից<sup>10</sup>: Լինելով պաշտոնական բնույթի փաստաթղթեր՝ դրանք աղբյուրագիտական մեջ կարևորություն են ներկայացնում և ստույգ կերպով արտացոլում են իրականությունը, արձանագրում պարսից արքունիքի՝ հայության հանրեալ դրսարակվող քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում XVI-XVII դդ. պարսից արքունիքի կողմից հայ հոգևոր հաստատություններին տրվող առանձին իրավունքների, Արևելյան Հայաստանի հարկային համակարգի վերաբերյալ:

<sup>8</sup> Армяно-русские отношения в XVII веке, Сборник документов, т. I, Е., 1953, Армяно-русские отношения в первоый трети XVIII века, Сборник документов, т. II, часть I, Е., 1964, Армяно-русские отношения в первоый трети XVIII века, Сборник документов т. II, часть II, Е., 1967, Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, Сборник документов, т. III, Е., 1978.

<sup>9</sup> Զամբռ, գիրք որ կոչի յշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնակից որպիսութեանց Սիրոյ Աթոռոյ, եւ իրոյ շրջակայից վանօրիցն: Յանաժողովեցնեալ եւ շարադրեցնեալ ի Սիմեօնի ցաւահար եւ վշտակոծ կարողիկոս Երևանցւոյ, Կաղարշապատ, 1873 (այսուհետև՝ Զամբռ):

<sup>10</sup> Սատենադարանի պարսկերեն վավերագրեր, I. հրովարտակներ, կազմեց Յ. Ղ. Փափազյան, պրականացին (ժԵ-Ժ դդ.), Ե., 1956 (այսուհետև՝ Սատենադարանի պարսկերեն վավերագրեր), հրովարտակներ, պրական (I), Սատենադարանի պարսկերեն վավերագրեր, I. հրովարտակներ, կազմեց Յ. Ղ. Փափազյան, պրական Երկրորդ (1601-1650), Ե., 1959, Սատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III (1652-1731), կազմեց Ք. Կոստիկյան, Ե., 2005:

Ատենախոսության շարադրմանը նպաստել են նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում վրաց և ռուս թագավորների միջև նամակների<sup>11</sup> և Ռուսաստանի՝ Արևելի Երկրների հետ կնքած պայմանագրերի ժողովածուները<sup>12</sup>, ինչպես նաև Հայաստանի մասին՝ թուրքական աղբյուների՝ հայերին վերաբերող հատվածները, որոնք բարգանմվել և հրատարակության են պատրաստվել Ա. Սաֆրաստյանի կողմից<sup>13</sup>:

Յետագոտվող թեմայի համար նշված աղբյուների հետ մեկտեղ կարևորություն են ներկայացնում հայ և օտար հեղինակների աշխատությունները, որոնց քննությունն առավել արդյունավետ է դարձնում արցախահայության ազգային-ազատագրական պայքարի անաշար լուսաբանումը:

Ա. Յովհաննիսյանի արժեքավոր աշխատության<sup>14</sup> մեջ տեղ են գտել հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության և հայերի քաղաքական կողմնորոշման վերաբերյալ հարցեր: Յեղինակը քննական վերլուծության է Ենթարկել Խսրայել Օրիի և Մինաս Վարդապետ Տիգրանյանի կողմից կազմված փաստաթերթի վավերականությունը և հիմնավոր կերպով պարզաբանել հայերի ռուսական կողմնորոշման ժամանակագրական սահմաններն ու իրական դրդապատճառները:

Դայ ազատագրական պայքարի ուսումնասիրվող ժամանակաշրջանի առանձնահատկությունները հետագոտելիս կարող է Աշոտ Յովհաննիսյանի մեկ այլ հիմնարար աշխատության<sup>15</sup> համակողմանի ուսումնասիրությունը: Յեղինակը մեծ տեղ է հատկացրել Խսրայել Օրիին, տվել նրա կյանքի և գործունեության քննական պատկերը, մանրամասն կերպով վերլուծել նրա դերն ու նշանակությունը հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում:

Խսրայել Օրիի կյանքի և գործունեության ուսումնասիրության առումով ատենախոսության համար արժեքավոր են նաև Ե. Գեղամյանցի<sup>16</sup>, Յ. Ջյուրտյանի<sup>17</sup>, Ա. Աբրահամյանի<sup>18</sup>, Ե. Տոլբագյանի<sup>19</sup> աշխատությունները:

1723-1728 թթ. ազատագրական պայքարի և հայկական գինված ինքնապաշտպանության դեկավարների ու ռուսական կառավարության միջև հաստատված նամակագրության ուսումնասիրության առումով ատենախոսության համար արժեքավոր է Ա. Աբրահամյանի և մեկ աշխատությունը<sup>20</sup>:

<sup>11</sup> Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями 1639-1700 гг., СПб., 1861.

<sup>12</sup> Договоры России с Востоком, политические и торговые. Собрал и издал Т.Юзефович, СПб., 1869 (այսուհետև՝ Договоры России):

<sup>13</sup> Թուրքական աղբյուները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. I, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1961:

<sup>14</sup> Յովհաննիսյան Ա. Հայ-ռուս օրինացիայի ծագման խնդիրը, Եջմիածին, 1921:

<sup>15</sup> Յովհաննիսյան Ա. Դրվագներ հայ ազատագրական մնորդ պատմության, գիրք 2, Ե., 1959:

<sup>16</sup> Գեղամյան Ե., Խսրայել Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914:

<sup>17</sup> Քիւրտյան Յ., Խսրայել Օրի, Վենետիկ, 1960:

<sup>18</sup> Աբրահամյան Ա., Խսրայել Օրի, Ե., 1978:

<sup>19</sup> Տոլբագյան Ե., XVIII դարի հայ ազատագրական շարժումները և ռուսական կողմնորոշումը: Պետրոս Ա. և հայերը, Ս., 2005:

<sup>20</sup> Աբրահամյան Ա., Մի է Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953:

Արցախի և արցախահայության ազգային-ազգատագրական պայքարի պատմության մի շարք կարևոր էջերի ուսումնասիրությանը նպաստել են Մ. Բարյուղարյանցի<sup>21</sup>, Պ. Դարությունյանի<sup>22</sup>, Վ. Մարտիրոսյանի<sup>23</sup>, Յ. Խաչատրյանի<sup>24</sup>, Լեյնի<sup>25</sup>, Ռաֆֆիի<sup>26</sup>, Ե. Լալայանի<sup>27</sup>, Բ. Ովուրաբյանի<sup>28</sup>, Վ. Բալյալյանի<sup>29</sup> աշխատությունները:

Հայ Առաքելական Եկեղեցու և Գանձասարի կարողիկոսության պատմության ուսումնասիրության առօնմով կարևոր է Մ. Օրմանյանի աշխատությունը<sup>30</sup>, որը մինչ օրս էլ շարունակում է մնալ ու գործածվել իրեն Հայ Առաքելական Եկեղեցու պատմության եզակի հաճրագիտարան:

XVIII դարի առաջին տասնամյակներում հայ ազատագրական շարժման կազմակերպման և ղեկավարման գործում Յայ Առաքելական եկեղեցու ունեցած դերի ու նշանակության ուսումնասիրության տեսանկյունից ատենախոսության համար արժեքավոր է Ա. Ավագյանի աշխատությունը<sup>31</sup>:

Գանձասարի կաթողիկոսության պատմության ուսումնասիրության առումով արժեքավոր է Լ. Սկրտումյանի աշխատությունը<sup>33</sup>: Հատկապես կարևորվում է հեղինակի հետազոտությունը Գանձասարի կաթողիկոսությունում առկա հակառակության հիմնահարցի և XVIII դարի ազատագրական պայքարի կազմակերպման գործում Գանձասարի կաթողիկոսության ունեցած դերի վեռաբերյալ:

Աղցախահայության ազատագրական պայքարը գլխավորող մելիքների իրավունքների և պարտականությունների, մելիքական տների տոհմաբանության և մեր կողմից հետազոտվող ժամանակաշրջանում Արցախի կառավարման

<sup>21</sup> Բարիխուտարեանց Ա., Արցախ, Բագու, 1895, Բարիխուտարեանց Ա., Աղուանից Երկիր և դրահիք: Արցախ, Ե., 1999, Բարիխուտարեանց Ա., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վասովահասատ, 1902, Բարիխուտարեանց Ա., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆիիւ, 1907:

<sup>22</sup> Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М. 1954.

<sup>23</sup> Մարտիրոսյան Վ., Յայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պարագում (XVIII դարի 20-ամա թվականներ). Ե.. 1971:

<sup>24</sup> Խաչատրյան Յ., Յայ և ոռւս ժողովուրդների գինակցությունը ռուսական քանակի

<sup>25</sup> Լեռ, Երևելի ժողովածու, հատոր 3, գիր 2, Ե., 1973, Լեռ, Երևելի ժողովածու, հատոր 5, Ե.,

<sup>26</sup> Րաֆֆի, Երևեհ ժողովածու, հ. 9, Խամսայի մելիքություններ, Ե., 1987:

<sup>27</sup> Լալայան Ե., Երկեր, հատոր Երկրորդ, Ե., 1988:

<sup>28</sup> Ուղարքաբան Բ., Աղօստինուական սկզբ

<sup>29</sup> Բայազին Վ. Արամին ապահովություն ինքնառարկ մինչև մեռնութեան է. 1998:

<sup>30</sup> Օրմաննան Ա., Ազգային պատմությունը և հայությունը Եվրոպայում և Ասիայում, Երևան, 2010:

<sup>31</sup> Ավագանը Ա. Յանց Եւերեակի ԽVIII ուսուհանարարական շարժման բա

Ճշգրտված է, ուստի պարզուն ԽVIII դարում ազատագույնական Հայաստանում՝ 2003:

<sup>32</sup> Կամինեան է Գյուղականի պարզությունը է 2005:

<sup>33</sup> Մասունքական Ե., «Կանոնադրություն», Ե., 2003.

Օվկլութեայան Է., Գլուխացից (Դաստիարակի) վարդութեան

համակարգի ուսումնասիրության առումով ատենախոսության համար կարևոր է Ա. Մաղայանի աշխատությունը<sup>34</sup>:

Ստենախոսության շարադրմանը նպաստել են նաև օտարալեզու հեղինակներ Ս. Սոլովյովի<sup>35</sup>, Պ. Բուտկովի<sup>36</sup>, Ս. Շայի<sup>37</sup>, Ե. Տառելի<sup>38</sup>, Վ. Լիսովի<sup>39</sup>, աշխատությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետ կապված տարարնույր հարցերի պարզաբանմանը մեծապես նպաստել են նաև Ա. Արքահամանի<sup>40</sup>, Ա. Այվազյանի<sup>41</sup>, Զ. Արզունանյանի<sup>42</sup>, Վ. Մարտիրոսյանի<sup>43</sup>, Վ. Ուսկանյանի<sup>44</sup>, Պ. Չոբանյանի<sup>45</sup>, Ֆ. Պողոսյանի<sup>46</sup> հոդվածները:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱԾԾԵՐԸ ՈՒ ԲՈՎԱԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդիհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 142 էջ:

<sup>34</sup> Մաղայան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դր., Ե., 2007:

<sup>35</sup> Соловьев С., История России с древнейших времен, т. XVIII, М. 1868.

<sup>36</sup> Бутков П., Материалы для новоу историю Кавказа с 1722 по 1803 гг., СПб., 1869.

<sup>37</sup> Shay M., The Ottoman Empire from 1720 to 1734. As revealed in Despatches of the Venetian Baily, Urbana, 1944.

<sup>38</sup> Тарле Е. В., Русский флот и внешняя политика Петра I, М., 1949.

<sup>39</sup> Лысцов В., Персидский Поход Петра I: 1722-1723 гг., М., 1951.

<sup>40</sup> Արքահաման Ա., Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման շուրջ, Պատմաբանասիրական հանդես, 1972, № 4, էջ 159-184, նույնի՝ Դокументы из истории совместной борьбы народов Закавказья против турецких агрессоров в первоый четверть XVIII века, Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2, էջ 245-248:

<sup>41</sup> Ավագյան Ա., Աստվածատու Ա Համադանի կարողիկոսը (1715-1725) և հայ ազատագրական շարժմանը, «Եջմիածին», ամսագիր, 2002, Զ-Է, էջ 68-76, նույնի՝ Իրադարձությունները Անդրկովկասում 1723 թվականին և արցախահայերի առաջնություն օգնական ռազմերը Սյունիքի, Պատմա-բանասիրական հանդես, 1990, № 4, էջ 63-80, նույնի՝ Իրադարձությունները Ղափանոս և Նախշեանի խանությունում 1724 թ., Պատմաբանասիրական հանդես, 1991, № 2, էջ 102-114, նույնի՝ «Ղափանցկոց պատմության» ժամանակագրության հավաստիությունը և կառուցվածքը, Պատմա-բանասիրական հանդես, 1992, № 1, էջ 85-100, նույնի՝ 1720-ական թթ. Սյունաց ազատագրական շարժման պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, 1990, № 2, էջ 119-135:

<sup>42</sup> Արզունանյան Զ., Եսայի Հասան-Ձալայանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1979, № 5, էջ 50-57, նույնի՝ «Մեծ» և «Փոքր» տեղաբների հարցի շուրջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1985, № 4, էջ 85-92, նույնի՝ Սղմանաների առաջացումը և ուղղագրական նշանակությունը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1982, № 9, էջ 77-86:

<sup>43</sup> Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թ. պաշտպանությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 2, էջ 187-191:

<sup>44</sup> Ուսկանյան Վ., Կյուրայել Օրիի կողմանից Պետրոս արագիմն ներկայացված նորահայտ քարտեզը, Պատմա-բանասիրական հանդես, 1961, № 3-4, էջ 297-306, նույնի Յայ ժողովուրդի ռուսական օրինտացիայի հարցը մինչսովետական պատմագրության մեջ, ՅՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1957, № 3, էջ 43-62, Ուսկանյան Վ., Ռուսաստամի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ., Պատմաբանասիրական հանդես, 1964, թ. 2, էջ 249-272:

<sup>45</sup> Կօնանյան Պ., Օ հետորիք առօքաց ստորագրության պատմա-բանասիրական հանդես, 2002, № 3, էջ 145-159:

<sup>46</sup> Պողոսյան Ֆ., Եջմիածին կաթողիկոսությունը և հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին քառորդում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1977, № 4, էջ 24-36, նույնի՝ Խանսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանքեր Հայաստանի արիստվանների, 1966, № 1, էջ 197-208:

**ՆԵՐՍԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ** հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբնաբյուրների ու առկա գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ԱՐՑԱԽԸ ԽVII ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՎ ԽVIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ»,** բաղկացած է երեք ներագլուխներից:

**Առաջին ենթագլուխը՝ «Աշխարհագրական նկարագիրը. կառավարման համակարգը»,** անփոփ կերպով ներկայացված են խնդրո առարկա ժամանակաշրջանում Արցախի աշխարհագրական նկարագիրը, կառավարման համակարգը և այն մելիքական տները, որոնց ներկայացուցիչները գլխավորել են ազատագրական պայքարը:

Արցախը, որը Մեծ Հայքի 15 նահանգներից կամ աշխարհներից էր<sup>47</sup>, բաղկացած էր 12 գավառներից՝ Մյուս Հարանդ, Վայկունիք, Բերդանոր, Մեծիրանը, Մեծկուտանը, Հարձւանը, Մուխանը, Պիհանը, Պարսկանը, Քուստի, Փառնես, Կողը՝ Արցախն այս սահմաններով գրադեցնում էր ավելի քան 15.500 կմ<sup>2</sup> տարածք<sup>48</sup>:

Արցախը հյուսիսից և արևելքից հարևան էր Ուտիք նահանգին, որի հետ սահմանակցությունը ծգվում էր Տավուշից մինչև Սուլիսանը դաշտի եզրը: Այս երկու նահանգները միասին հայտնի էին Հայոց Արևելից կողմանը անվանումով<sup>50</sup>: Հարավից երասին գետն Արցախը բաժանում էր Մեծ Հայքի Փայտակարան նահանգից: Արևմուտքում՝ երասին գետից մինչև Սևանի ափը, Արցախը սահմանակից էր Մեծ Հայքի Սյունիքը նահանգին: Արցախը<sup>51</sup> և Սյունիքը իրարից բաժանող գիծը Աղավնո կամ Ագարի-Հազարի գետն էր: Մնացած կետերում սահմանը հաճախ փոխվում էր՝ առանց խաթարելու երկու նահանգների համագրծակցությունը պատճական ամենաբարդ հրադրություններում<sup>52</sup>.

Միջնադարի ընթացքում իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Արցախը կարողացավ մեծագույն ջանքերի գնով դիմակայել օտար ներխուժողների ավերածություններին և հիմնականում պահպանել ոչ միայն իր բաղաքական ինքնուրույնությունը, այլև հայ ավատատիրական հասարակությանը բնորոշ սոցիալ-տնտեսական կառուցվածքը<sup>53</sup>:

Ինչպես վկայում են աղբյուրները<sup>54</sup>, XV դարից սկսած՝ Արցախի, ինչպես և Հայաստանի որոշ շրջաններու իշխանները կոչվում են մելիքներ<sup>55</sup>: «Մելիք» տերմինը

<sup>47</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյց յաւելուածովք նախնեաց», Վեմետիկ, 1881, էջ 33, հմնտ. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 109:

<sup>48</sup> Տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, Ժամորագրություններ՝ Ա. Արքահամյանի և Գ. Պետրոսյանի, Ե., 1979, էջ 295:

<sup>49</sup> Սարգսյան Ս., Արցախ: Պատմաշխարհագրական ճշգրտումներ, Ե., 1996, էջ 62:

<sup>50</sup> Սովում Կաղանկասուացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ.Ալբարեյանի, Ե., 1983, էջ 32:

<sup>51</sup> Ինչպես նշել է Սովում Խորենացին, Արցախն անվանվում էր նաև Փոքր Սյունիք: Այն այսպէս էր հիշատակվում Մյուս Հարանդ գավառում գտնվող Ամարասի կապակցությամբ (տես Սովում Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 260): Սյունիքում էր գտնվում նույնանում Հարանդ գավառը (տես «Աշխարհացոյց Սովումի Խորենացոյց յաւելուածովք նախնեաց», էջ 33):

<sup>52</sup> Տես Ուլուքբայրան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 9:

<sup>53</sup> Տես Կօնահյան Պ., Օ հետորքի առօքական պատմությունը, հրովարտակներ, պրակ 1, էջ 45, հմնտ.

Բարիտուտարեան Մ., «Պատմութիւն Աղուանից, հ. Ա., էջ 213:

<sup>54</sup> «Մելիք»-ը արքական քառ է, որ նշանակում է իշխող, տիրակալ, նաև՝ բազավոր, և սերվում է «ուկ»՝ «տիրել», «իշխել»՝ մնացանուր սենական արմատից (Աճառյան Յ., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1977 էջ 635):

տարբեր ժամանակներում արտահայտել է տարբեր իմաստներ: Խնդրո առարկա ժամանակաշրջանում մելիքներ էին կոչվում իիմանականում իշխանները, գավառների կառավարիչները,<sup>56</sup> իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ մեկ կամ մի քանի գյուղերի կառավարիչները:

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններում Արցախում առաջացած ինճ վարչա-քաղաքական միավորները՝ Գյուլիստանի, Զրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները («Խամսա»<sup>57</sup>) համարվում էին արցախահայության բարոյական ու գաղափարական ոգին բարձր պահող ուժը և հենց նրանք էլ, համագործակցելով Գանձասարի կաթողիկոսության հետ, ձեռնամուխ Եղան ազատագրական պայքարի կազմակերպմանն ու իրագործմանը:

**Երկրորդ ենթագլխում՝ «Սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը»,** ներկայացված են ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, հողատիրության և հարկահանության ձևերը:

XVII դարի երկորոր կեսին արցախահայության վիճակը թիւ թե շատ տանելի էր: Գանձասարի կաթողիկոս Եսայի Յասան-Զալայսանը (1701-1728) անգամ դրվատանը վ է հիշում շահ Արքա II-ի (1642-1666) և նրան հաջորդած շահ Սուլեյմանի (1667-1694) կառավարման ժամանակաշրջանները: Վիճակը հատկապես փոխվեց և վատրադաշտ XVII դարի վերջերից, երբ Պարսկաստանն ընկավ տնտեսական ու քաղաքական ճգնաժամի մեջ, և սկսեց կազմալուծվել ու քայլավել Սեֆյան Պարսկաստանի պետական ապարատը:

1699 թ. շահ Սուլեյման Յուսեբյանը (1694-1722), արքունիքի ուռածացած ծախսերը հոգալու համար, բնակչության տարբեր խավերի հարստահարումը բազմապատկելով, փորձում էր լցնել արքունիքի գանձարանը, կրկնապատիկ ու եռապատիկ չափերով պատճենում էր արհեստավորներից, առևտուականներից և արհասարակ ամբողջ բնակչությունից գանձվող հարկերը: Ամբողջ Երկրով մեկ տեղի էր ունենում բնակչության նոր հաշվառուն, որի ընթացքում կիրավուն էին դաժան միջոցներ:

Պարսից վարչա-քաղաքական տիրապետությունը Արևելյան Յայաստանում, այդ բվում և Արցախում, հանգեցնում էր սոցիալ-տնտեսական և հասարակական օտարամուտ փոփոխությունների, որոնք, աղճատելով հայ հասարակության բնականոն զարգացումը, ծանրացնում էին հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական կացությունը: Ստեղծված իրավիճակում հայ ժողովրդը, մելիքական ուժերի և հայ հոգևորականության անմիջական աջակցությամբ, ձեռնամուխ Եղավ ազատագրական գաղափարների իրավանացմանը:

**Երրորդ ենթագլխում՝ «Գանձասարի կաթողիկոսությունը XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբին»,** ներկայացված է խնդրո առարկա ժամանակաշրջանում Արցախի հոգևոր կյանքը, մանրանասն անդադար է կատարվել Գանձասարի կաթողիկոսությունում առաջացած հակառօռության իիմանահացին, մանրակիրիտ քննության են առնված Երեմիա Յասան-Զալայսանի և նրան հակառող Սինեն Խոտորաշենցու և նրանց հաջորդած Եսայի Յասան-Զալայսանի ու Ներսես Զրաբերդցու կաթողիկոսանալու հանգամանքները:

XVI-XVII դարի բուրք-պարսկական պատերազմները և դրանց հետևանքով տեղի ունեցած Յայաստանի բաժանումները նվազող բռնակալությունների միջև ծանր հետևանքներ ունեցած հայ ժողովրդի կյանքի բոլոր ոլորտներում: Հայ Արաբելական Եկեղեցին հավասարապես կիսում էր բոլոր այն արհավիրքները, որոնք բաժին հասան հայ ժողովրդին Յայաստանի թե արևելյան և թե արևմտյան մասերում: Հայ Եկեղեցու

<sup>56</sup> Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 197-198: Սելիքներ էին կոչվում նաև գյուղերի, ավանների և քաղաքների քաղանակերի այն ավագները, որոնք պատասխանատու էին հարկերի գանձման համար (տես Սաղայան Ա., նշվ. աշխ., էջ 32):

<sup>57</sup> «Խամսա» արաբերեն նշանակում է հինգ, իսկ խամսայի մելիքություններ նշանակում է հինգ մելիքություններ:

տնտեսական վիճակի վատքարացման հետ մեկտեղ առաջացել էին կաթողիկոսական գահի համար պայքարող տարրեր խմբավորումներ<sup>58</sup>: Նույնպիսի իրավիճակ էր տիրում նաև Հայ առաքելական եկեղեցու չորս ճյուղերից մեկի՝ Գանձասարի կաթողիկոսությունում:

Արուակալական պայքարը Գանձասարի կաթողիկոսությունում հատկապես սրբել էր Երեմիա Հասան-Զալայյանի (1676-1700) և նրան հակաթոռ Սիմեոն Խոտորաշենցու (1675-1701) օրոր<sup>59</sup>: Պայքարին միջամտում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Զուլայեցին, որը 1677 թ. Վրաստանում հանդիպում է Գանձասարի հակաթոռ կաթողիկոսներին և հաշտեցնում նրանց<sup>60</sup>: Սակայն հակաթոռ կաթողիկոսների միջև հաշտությունը երկար չի տևում: Հակոբ Զուլայեցու մահից<sup>61</sup> հետո նրանց պայքարը շարունակվում է նաև հաջորդ կաթողիկոսների՝ Եղիազար Այճրափու (1681-1691) և Նահապետ Ա Եղիսաբու (1691-1705) օրոր և հասնում մինչև իրենց կյանքի վերջին օրերը՝ փոխանցվելով իրենց հաջորդներին՝ Եսայի Հասան-Զալայյանին և Ներսես Զրաբերդցուն: Չնայած հակաթոռության հիմնահարցի առկայությանը՝ Գանձասարի կաթողիկոսություն ակտիվ մասնակցություն է ունեցել XVIII դարի հայ ժողովրդի ազատագրական պայքարին: XVIII դարի 20-ական թվականներին Գանձասարի կաթողիկոսությունը աջակցել է Արցախի սղնախներին օտար զավթիչների դեմ մղված պայքարում, իսկ ժամանակի կաթողիկոսներ Եսայի Հասան-Զալայյանը և Ներսես Զրաբերդցին, որոնք մեծ հեղինակություն էին վայելում արցախահայության շրջանում, ազատագրական պայքարի գաղափարը առաջնային դարձնելով, դեկապարել են սղնախների կազմակերպումն ու ռազմական բազմապիսի գործողությունների իրականացումը:

**Երկրորդ գլուխը՝ «ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՍ ՆՈՐ ՓՈՒԼԸ XVIII ԴԱՐԻ ՍԿՂՋԲԻՆ»:** բաղկացած է Երկու Ենթագլխից:

**Առաջին Ենթագլխում՝ «Իսրայել Օրին կազմակերպչական դերը ազատագրական ծրագրում»,** ներկայացված են Իսրայել Օրին՝ ազատագրական ծրագրերի իրականացմանն ուղղված գործունեությունը, օտարերկյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներն ու բանակցությունները և հայկական քաղաքական ու հոգևոր շրջանակների հետ ունեցած հարաբերությունները: Քննության են առնված քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրօնական և միջազգային իրադրության փոփոխությանը պայմանավորված այն պատճառները, որոնք խանգարեցին Իսրայել Օրին մշակած ծրագրերի իրականացմանը: Մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել են Իսրայել Օրինի քաղաքական կողմնորոշման փոփոխության պատճառները:

Իր քաղաքական գործունեության սկզբնական շրջանում Օրին Հայաստանի ազատագրության խնդիրը կապում էր Եվրոպական երկրների դեկապարեների, մասնավորապես Պֆալցի կուրֆյուրստի հետ, որը որոշակի հետաքրքրություն էր ցուցաբերում այդ հարցի վերաբերյալ: Ժամանակի ընթացքում Օրինի համար պարզ դարձավ Հայաստանի ազատագրման խնդիրին նոր ուղղություն հաղորդելու անհրաժեշտությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռուսաստանը բազմաթիվ չափազված խնդիրներ ուներ ինչպես թուրքերի, այնպես էլ պարսիկների հետ, ինչպես նաև Ռուսաստանի շահագրգռվածությունը Կասպից և Սև ծովերի ափերին

<sup>58</sup> Տե՛ս Առաքել Դավիթեցի, Գիրք պատմութեան, Ե., 1990, էջ 242:

<sup>59</sup> Տե՛ս Զամբո, էջ 80:

<sup>60</sup> Տե՛ս Հովհաննեսյան Ա., Դրվագներ, գ. 2, էջ 208-209:

<sup>61</sup> «Թմբի Շնթթ օօօստոսի Բ-ումն Ըստակով Աստուածածին Եկեղեցումն Յակոբ կաթողիկոսն առ Աստուած փոխեց» (Զաքարիա Ագուլեցի, Օրագորութիւն, Ե., 1938, էջ 151):

ռազմավարական կարևոր հենակետեր ստանալու հարցում, կասկած չէր մնում, որ Հայաստանի ազատագրման հարցում միակ և հրական դաշնակիցը կարող էր լինել Ուստաստանը: Այսպիսով, Խսրայել Օրին, վերջնականապես հույսը կտրելով արևատաելորպական տերություններից օգնություն ստանալուց, Հայաստանի ազատագրման խնդիրը կապեց Ուստաստանի հետ: Դա կարևոր և շրջադարձային քայլ էր հայ ժողովոյի ազատագրական պայքարի պատմության մեջ:

Պարսկաստանի ներքին դրության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ունենալու, հայ և վրաց ապստամբական ուժերը համախմբելու և այլ անհրաժեշտ գործողություններ կատարելու համար Օրին նախագծել էր իր գլխավորությամբ ռուսական մեծ դեսպանություն Պարսկաստան ուղարկելու ծրագիրը: Դեսպանությունը պետք է ժամաներ Սպահան՝ շահ Սուլթան Ջուսեյնին ռուսաց քաջավորության բարեկամությունը հավաստիացնելու նպատակով, բայց իրականում պետք է զբաղվեր հետախուզական անհրաժեշտ տվյալներ հայթյուրելով և նախապատրաստական աշխատանքներ տաներ տեղի հայերի և վրացիների շրջանում:

Դենց այս նպատակով 1703 թ. դեկտեմբերի 6-ին գրված նամակում Օրին գնդապետի աստիճան ստանալու համար դիմեց անձամբ Պետրոս Սեծին և բացատրեց դրա անհրաժեշտությունը<sup>62</sup>: Պետրոս Սեծն ընդուածեց Խսրայել Օրին խնդրանքին և նրա դիմումի վրա մակագրեց: «Ծնորհել գնդապետի կոչում ըստ իր ցանկության»<sup>63</sup>: Ցարը նաև խնդրում էր շահին ընդունել Խսրայել Օրին և ի սեր Ուստաստանի ու Պարսկաստանի բարեկամության՝ հարգել նրա խնդրանքը<sup>64</sup>: Այս գրությամբ ցարը, փաստորեն, իր պաշտպանության տակ էր վերցնում Խսրայել Օրին՝ ցանկանալով բարձրացնել Օրին հեղինակությունը ինչպես պարսիկների, այնպես էլ հայերի աչքում:

**Երկրորդ ենթագլխում՝ «Գանձասարի կաթողիկոսության դերը ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործում», ներկայացված է ազատագրական պայքարի կազմակերպման գործում Խսրայել Օրին և հայ հոգևորականության համագործակցությունը: Քննության է առնված նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսության համագործակցությունն ազատագրական պայքարի կազմակերպման գործում: Ներկայացված են Եսայի Հասան-Զալայամանի ծեռնարկած քայլերը Արցախի սահմանները թշնամական հարձակումներից պաշտպանելու ուղղությամբ:**

Մինչ Օրին գրավված էր պարսկական արշավանքի կազմակերպման հարցերով, Գանձասարում եղանդուն գործունեություն էր ծավալել Եսայի Հասան-Զալայամանը: Իր կաթողիկոսության հենց առաջին օրերից գործելով մեծ նրանկատության՝ նա կարողացել էր Գանձասարի կաթողիկոսության հովանու ներքո ազատագրական գաղափարների շուրջ համախմբել Արցախի նելիքներին:

Ս. Էջմիածնում գիտեին ստեղծված իրավիճակուն Գանձասարի կաթողիկոսության նշանակության և Եսայի կաթողիկոսի գործադրած ջանքերի նասին, ուստի հնարավորինս աջակցում էին Եսայի Հասան-Զալայամանի դիրքերի ամրապնդմանը<sup>65</sup>:

Երբ Օրին, ավարտելով ռուսական պատվիրակության դեկավարի առաջելությունը, մեկնում էր Մոսկվա, մի քանի եկեղեցականների ուղեցությամբ նրա հետ էր նաև Գանձասարի Եսայի կաթողիկոսը, որը նպատակ ուներ անձամբ հանդիպել

<sup>62</sup> Տե՛ս ԷՅՕԲ Դ., նշվ. աշխ., էջ 185-186:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>64</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 224-225:

<sup>65</sup> Տե՛ս Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, էջ 219:

Ոուսաց թագավորի հետ և պայմանավորվել Յայաստանի ազատագրության հարցերի վերաբերյալ:

Իսրայել Օրին և Եսայի Յասան-Զալայանը մեծ դժվարություններով միայն 1711 թ. օգոստոսին հասան Աստրախան, սակայն հենց այդտեղ էլ ընդհատվեց նրանց ուղևորությունը, քանի որ նույն ամսում Օրին մահացավ: Եսայի կաթողիկոսը, որպես հավատարին զինակից, մնաց Օրին կողքին մինչև նրա կյանքի վերջին օրերը: Օրին մահից հետո Եսայի կաթողիկոսը վերադարձավ Գանձասարը<sup>66</sup>:

Մինաս վարդապետ Տիգրանյանը և Եսայի Յասան-Զալայանը, համագործակցելով Արցախի մելիքների հետ, ստանձնեցին ազատագրական պայքարի հետագա կազմակերպման գործը: Յայոց գինուած ազատամբության նախապատրաստման ժամանակաշրջանում չափազանց կարևոր էր Յայ Առաքելական Եկեղեցու հայութի դիրքորոշման ուղղվածությունը դեպի գինված պաշտպանության կազմակերպումը: Եվ նույնիսկ Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսության համագործակցության պարագայում ստեղծվել էր բավականին բարդ իրավիճակ, քանի որ այդ ժամանակաշրջանում Արցախը ենթարկվում էր լեզգիների ավերիչ արշավանքներին: Ստեղծված իրավիճակում Եսայի Յասան-Զալայանն ստիպված էր ուղիներ փնտրել մի կողմից երկիրը վաչկառուն ցեղերի՝ հյուսիս-արևելքից կատարվող հարձակումներից պաշտպանելու, մյուս կողմից, ընդհանրապես, օտար լծից ազատագրվելու համար: Միաժամանակ նա չէր դադարեցնում կապը վրաց արքունիքի հետ, ինչպես նաև շարունակում էր դիմումներ հղել Պետրոս I-ին, որի գլխավորած գործերին սպասում էր Արցախի և Ռւսիայի հայ բնակչությունը:

**Երրորդ գլուխը՝ «ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒ 1722-1731 ԹԹ.»,** բաղկացած է երեք ենթարկման:

**Առաջին ենթագլուխ՝ «Ոուսական բանակի Կասպիական արշավանքը և ազատագրական շարժման աշխատացումը»**, անդրադարձ է կատարվել Պետրոս I-ի Կասպիական արշավանքին, ներկայացված է Եսայի Յասան-Զալայանի գլխավորած պայքարը պարսկական իշխանությունների կողմից խրախուսվող լեռնականների դեմ, որի ընթացքում արցախահայերը մեծ ջանքերի գնով կարողացան պաշտպանել իրենց սահմանները: Քննության են արնված սղնախների առաջացման նախադրյանները և դրանց ռազմաքաղաքական նշանակությունը ազատագրական պայքարի ողջ ընթացքում:

Հյուսիսային պատերազմի ընթացքում շարունակելով իր ուշադրության կենտրոնում պահել Յայաստանում և Վրաստանում տիրող իրավիճակը՝ Պետրոս I-ը դեռևս XVIII դարի 10-ական թվականներից սկսել էր նախապատրաստվել Կասպից ծովի ափերին անրապնդվելու խնդրի իրականացման: Դրա համար նախառաջ անհրաժեշտ էր ապահովել հատկապես հայերի և վրացիների աջակցությունը, ինչպես նաև քարմացնել տեղեկությունները Պարսկաստանում տիրող իրավիճակի մասին:

XVIII դարի 20-ական թվականների սկզբին Պարսկաստանը խիստ թուլացել էր ներքին երկպառակություններից<sup>68</sup>: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Պետրոս I-ը շարունակում էր բանակցությունները հայերի և վրացիների հետ՝ խոստանալով կազմակերպել հայ-վրացական պետություն Ոուսաստանի հովանու ներքո<sup>69</sup>: Ըվեղիայի դեմ պատերազմն ավարտելուց հետո Պետրոս I-ը սկսեց իր «Կասպիական արշավանքը»<sup>70</sup>: Սակայն, ինչպես միջազգային իրադրության փոփոխությունը, այնպես էլ Ոուսաստանի նկատմամբ թշնամաքար տրամադրված Անգլիայի և Ֆրանսիայի

<sup>66</sup> ՅՅՕԲ Դ., նշվ. աշխ., էջ 312:

<sup>67</sup> Նոյն տեղում, էջ 277-278:

<sup>68</sup> Տե՛ս Խաչատրու Զուլայեցի, Պատմութիւն պարսից, Կաղարշապատ, 1905, էջ 226:

<sup>69</sup> Տե՛ս Լիսուս Բ., նշվ. աշխ., էջ 190, 206:

<sup>70</sup> ՅՅՕԲ Դ., նշվ. աշխ., էջ LIII:

Այսախով, հայ ազգային գործիչների՝ օտար երկրների միջոցով ազատագրվելու ձգումները հերթական անգամ չիրականացան, ինչը պես է համոզեր նրանց, որ Հայաստանի ազատագրումը կարեի է իրականացնել միայն սեփական ուժերով: Յայ զինվորականությունը շարունակեց համախմբված մնալ Եսայի Հասան-Զալայանի և մեկիբների իշխանության ներքո, ձեռնանուիս եղավ պաշտպանական ամրությունների՝ սղնախմների անրապահմանը, որոնք XVIII դարի 20-ական թթ. հայ ռազմա-քաղաքական հմբաւորումների կենտրոններն էին:

XVIII դարի 20-ական թվականների սկզբին Արցախի մելիքական հինգ միավորումներուն էին Գյուլհասանի (Կենտրոնը՝ Գյուլհասանի բերդը) և Զրաբերդի (Երից-Մանկանց վանքը) սղնախը, Վարանդայի մի մասի (Ծովառեղ-Ավետարանց), Վարանդայի մյուս մասի (Ծոյ կամ Քարավոլուս սղնախ), Խաչենի (Գանձասարի վանքը) և Դիզակի (Տող կենտրոնով և Թիրու լեռան միավորումներով) սղնախներուն: Սղնախները կային նաև այլ վայրեղում՝ Կապանում, Լորիում, Գեղարքունիքում և Քոյանհում:

Չնայած պատմագրության մեջ սղնակների առաջացման դրդապատճառների վերաբերյալ տարբեր տեսակներերի առկայությանը<sup>71</sup>, հայ ազատագրական շարժման տարրերը կենտրոններում ստեղծված վավերագրերը վկայում են, որ Արցախում սղնակների ստեղծումն կապված էր 1722 թ. հակապարսկական ապստամբության կազմակերպման հետ<sup>72</sup>:

Սղմախներն Արցախում և Սյունիքում յուրահատուկ ու կենսունակ ռազմաքաղաքական միավորներ էին, որոնք թեկավարում ու ազատագրական շարժման շահերին էին ծառայեցնում ժողովրդի բոլոր հնարավորությունները: Սղմախները կարողացան գոյատևել բավականին երկար՝ 1722 թ. սկսած մինչև 1730-ականների կեսերը, և մեծապես նպաստեցին ազատագրական պայքարի ընացքում ունեցած հաջողություններին:

**Երկրորդ ենթագլուխում՝ «Արցախահայության պայքարն ինքնիշխանության համար»**, ներկայացված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիրքորոշման ուղղվածությունը դեպի զինված պայքարի կազմակերպությունը և Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համարանցու լիակատար աջակցությունը ազատագրական շարժմանը։ Մանրամասն կերպով ուսումնասիրվել են արցախահայության ազատագրական պայքարի ղեկավարների և ռուսական արքունիքի միջև ընթացող բանակցությունները, քննության են առնված արցախահայության ազատագրական պայքարին օժանդակելու հարցում Ռուսաստանի շահագրգության իրական դրդապատճառները, լուսաբանվել է արցախահայության պայքարը ինչպես տարածաշրջան ներխուժած լեռնականների, այնպես էլ պարսկական և թուրքական զինված ուժերի դեմ։

Արցախում և Սյունիքում ազատագրական շարժմանը գործուն օժանդակություն էր ցուցաբերում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ որքան էլ որ Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուղ Ա Յանձնանցին (1715-1725) և հայ առողջեներոն ճգնում

<sup>71</sup> Տես Արմանо-ռուսские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, էջ XXXVIII, տես նաև Լեռ, Երկրորդ ժողովածոլ, հ. 3, գ. 2, էջ 122, Արյունյան Պ., Զշպ. աշխ., էջ 223, Էզօն Գ., Զշպ. աշխ., էջ 1 XI:

Էին գաղտնի պահել հայ ազատագրական շարժման և Ս. Էջմիածնի կապերը, միևնույն է, դրանք այնքան մեծ ծավալ էին ընդունել, որ ի վերջո հայտնի դարձան ինչպես օսմանյան, այնպես էլ պարսկական հետախուզությանը: Ստեղծված իրավիճակում, որքան էլ որ սղնախականները հաջողություններ ունենային, նրանց դժվար կլիներ դիմակայի թշնամական կանոնավոր գորաբանակներին, ուստի Արցախում հոյսները չեն կտրում Ռուսաստանից սպասվող օգնությունից: Պատվիրելով հայերին մի փոքր համբերել և սպասել իր գալստյանը՝ Պետրոս I-ը նշանամանակ ամեն ջանք գործադրում էր Պարսկաստանի հետ կնքել կասախական ափերի գրավումը հաստատող և օդինականացնող մի խաղաղ դաշնադրություն: 1723 թ. սեպտեմբերի 12-ին կնքվեց մի դաշնագիր, ըստ որի Պետրոս I-ը պարտավորվում էր զինվորական ուժով պաշտպանել շահ Թահմազին բռնոր այն ապստամբներից, որոնք գլուխ են բարձրացրել պարսից գահի դեմ: Ի պատասխան դրամ՝ շահը Ռուսաստանին էր զիջում մերձկասայան շրջանները, որոնք այսուհետ պետք է նշտապես գտնվեին «համառուսական կայսերական մեծության» կազմում: Եվ վերջապես, Ռուսաստանը խոստանում էր մշտապես բարեկամական հարաբերություններ պահպանել Պարսկաստանի հետ և օգնել՝ թշնամիների դեմ պայքարելու հարցում<sup>73</sup>:

Ռուսական կառավարությունը, առաջնորդվելով իր քաղաքական առաջնահերթ շահերով, շտապեց պայմանագիր կնքել նաև Թուրքիայի հետ: 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր, որով Օսմանյան կայսրությունը ճանաչեց Ռուսաստանի տիրապետությունը Կասպից ծովի առափնյա շրջաններում Դերբենդից մինչև Մազմանդարան, իսկ Ռուսական կայսրությունը, պարտավորվելով Մերձկասայան շրջաններից չչարժվել Անդրկովկասի խորքերը, փոխադարձաբար ճանաչեց Թուրքիայի ազդեցությունը Իրանի այսրկովկասայան տիրույթների նկատմամբ<sup>74</sup>:

Ռուս-թուրքական պայմանագիրը խստ բացասական հետևանքներ ունեցավ հայ ազատագրական պայքարի մասնակիցների համար, որոնք, երկար ժամանակ անտեղյակ մնալով այս պայմանագրին, շարունակում էին հուսալ և սպասել Ռուսաստանի օգնությանը: Սակայն ռուսական կղզին խոստումներն այդպես էլ իրականություն չդարձան: Պետրոս I-ին հաջորդած գահակալներն էլ ավելի անտարեր գնտվեցին հայ ժողովորի խնդրանքների հանդեպ, ուստի դրությունը մնաց անփոփոխ: Թուրքական բանակի ընդհարումները հայկական սղնախների հետ շարունակվեցին և ինչպես հետագայում գրում էր Մինաս Վարդապետը, արյունահեղ կոհիվներ էին տեղի ունենում համարյա ամեն օր<sup>75</sup>: Յայերի հերոսական պայքարը Սյունիքում և Արցախում կասեցնում էր թուրքական զորքերի արշավանքը դեպի Կասպից ծով: 1725թ. փետրվարին Արցախում ջախջախված թուրքական զորքերի իրամանատար երեք փաշաներից մենք, որը գերի էր ընկել, հայրանակած հայերին ասել էր. «...քեզ դուք չիք այս միջումն մեք իհման Դարաբանդու եւ Պաքու վերա էինք գնացել...»<sup>76</sup>: Քանի որ Ռուսական կայսրությունից զիմական օգնությունն այդպես էլ չըր ստացվում, հայ զինվորականությանը մնում էր ամուր կանգնել իր դիրքերում և մեծ ջանքերի գնով դիմագրավել թշնամուն:

**Երրորդ ենթակլում՝ «Եսայի Յասան-Զալալյանի գործունեությունը ազատագրական կոհիվների վերջին փուլում», ներկայացված է Եսայի Յասան-**

<sup>73</sup> Տե՛ս Դօգովոր Ռուսս, ս. 186-189:

<sup>74</sup> Տե՛ս Սոլովьев Ս., նշվ. աշխ., էջ 73:

<sup>75</sup> Տե՛ս Թօօ Հ., նշվ. աշխ., էջ 459:

<sup>76</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 422:

Զալայանի գործունեությունը 1726-1728 թթ.: Անդրադարձ է կատարվել նաև 1728-1731 թթ. ընթացքում տեղի ունեցած ազատագրական կրիվներին:

Ուստատանի խոստացած օգնությունն այդպես էլ չէր հասնում, իսկ բուրքական հարձակումներն օրեցօր ավելի վտանգավոր էին դառնում: Արցախահայերին մնում էր հույսը դմել միայն սեփական ուժերի վրա: Դատկապես համար պայքար ծավալեցին լեռնային շրջամների սղնախմների ղեկավարները<sup>77</sup>: Եսայի Դասան-Զալայանը, ելենլով ստեղծված իրավիճակից, Շոշ սղնախում գտնվող իվան Կարապետին հրահանգեց սղնախմների ղեկավարներին հորդորել գգույց լինել, բայց շարունակել պայքարը:

Չնայած մեր պատմագրության մեջ տեղ գտած տեսակետներին՝ բազմաթիվ նամակների և վավերագրերի համակողմանի ուստամասիրությունը հաստատում է, որ Եսայի կարողիկոսը ոչ միայն չէր հեռացել ազատագրական պայքարից, այլև նրա ամենաակտիվ կազմակերպիչներից և ղեկավարներից էր: Եսայի Դասան-Զալայանը մինչև իր կյանքի վերջին օրերը հավատարիմ է մնացել իր որդեգրած գաղափարներին՝ կողմնակից լինելով հայրենիքը գենքով պաշտպանելուն և անչափ մեծ պատասխանատվությամբ վերաբերվելով իր ստանձնած առաքելությանը: Իր հայրենասիրության և ստանձնած պարտավորություններին անմնացրող նվիրվածության շնորհիվ Եսայի Դասան-Զալայանը հսկայական ներդրում ունեցավ XVIII դարի առաջին տասնամյակների հայ ազատագրական պայքարի գործում:

Եսայի Դասան-Զալայանի մահից հետո էլ սղնախմներից մի քանիսը շարունակեցին իրենց պայքարը: 1729-1731 թթ. հայ դիմադրական շարժման գլխավոր օջախն էր դարձել Գյուլհստանի բերդը՝ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ: Գյուլհստանում ծավալված այս դիմադրական պայքարին մասնակցում էին նույնիսկ 1722 թ. Դայաստանից Լեհաստան հեռացած և 1728 թ. Արցախ վերադարձած հայ մարտիկները, որոնց գլուխ կանգնած էր հայրությանտ Գրիգոր Ստեփանյանը<sup>78</sup>: 1729-1731 թթ. Գյուլհստանի սղնախի գրուականները՝ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ, բուրքական գորքերի դեմ մղում էին համար հնքնապաշտպանական կողմներ, իսկ 1733 թ. հայերը հարվածներ հասցեցին նաև Արցախի և Գանձակի կողմերում գտնվող բուրքական հրոսակներին<sup>79</sup>:

Իրանի Նարի շահը, հաշվի առնելով արցախահայության զինական ուժը, 1735 թ. ճանաչեց հակաթուրքական պայքար մղող Արցախի իին մելիքությունները<sup>80</sup>, որոնց գերազանցական կառավարիչն էր Դիզակի մելիք Եգանը<sup>81</sup>: Սրանով, փաստորեն վավերացվեց այն, ինչ հերոսական պայքարի շնորհիվ ծեռք էր բերել Արցախի ազատատենչ հայությունը:

Այսախով, պատագրական պայքարի ընթացքում հայերը գրանցեցին զգալի հաջողություններ, ունեցան մարտունակ զորք, ժամանակավորապես ստեղծեցին հայկական ինքնավար իշխանություն: Ազատագրական պայքարի ավանդույթները չնահացան և փոխանցվեցին այն սերունդներին, որոնք հաջորդ դարերի ընթացքում էլ անձնագործարար պաշտպանեցին հայրենիքը թշնամական հարձակումներից: Այս ամենի

<sup>77</sup> Տես նույն տեղում, էջ 445:

<sup>78</sup> Տես Պարսամյան Վ., Լեհահայերի մասնակցությունը Դավիթ Բեկի ապստամբությանը, Ե., 1962, էջ 142:

<sup>79</sup> Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 440:

<sup>80</sup> Բարխուտարյանց Մ., Պատմութիւն Աղուամից, հ. Բ, էջ 97:

<sup>81</sup> Տես Ուլութարյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 149:

վառ վկայությունն է XX դարի վերջին տասնամյակում հայ ժողովրդի հաղթանակը Արցախյան պատերազմում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ** ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Յայց անկախ պետության բացակայության պայմաններում Արցախի մելիքությունները հայկական պետականությունը կրող այն եզակի ուժն էին, որի հիման վրա XVIII դ. առաջին տասնամյակներին ծրագրում էր վերստեղծել հայկական պետությունը: Քաղաքական ու սոցիալ-տնտեսական հժվարին պայմաններում հենց նրանք էին արցախահայության ոգին բարձր պահող ուժը: XVIII դարի առաջին տասնամյակների արցախահայության ազատագրական պայքարին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Գանձասարի կաթողիկոսությունը, որն աջակցել է Արցախի սղնախմներին պարսկական և թուրքական ուժերի դեմ նզված պայքարում, իսկ Եսայի Յասան-Զալալյան և Ներսես Զքաբերդի կաթողիկոսները դեկավարել են սղնախմների կազմակերպումն ու ռազմական բազմապիսի գործողությունների հրականացումը:

2. Եսայի Յասան-Զալալյանի՝ Գանձասարի կաթողիկոսական արքունի բարձրանալու տարեթվի կապակցությամբ մեր պատմագրության մեջ միասնական կարծիք չի եղել: Նշվել են 1700, 1702, նոյեմբեր 1695 թվականները, սակայն Մատենադարանի պարսկերեն Վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, չնայած Եսային իրականացրել է կաթողիկոսական գործառույթներ նաև ավելի վաղ, բայց նրա կաթողիկոսական իրավունքները պարսից շահի կողմից հաստատվել են 1701թ.:

3. XVIII դարի սկզբին՝ Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև Յայսատանի բաժանվածության պայմաններում, հայ ազատագրական պայքարի գործիչները, հույսը կտրելով արևմտաեվրոպական երկրներից, նոր ուղղվածություն հաղորդեցին ազատագրական պայքարին: Խսրայել Օրին, ճիշտ գնահատելով իրավիճակը, դարձավ առաջինը, ով կազմեց ազատագրական ծրագրեր՝ հայ ժողովրդի՝ օտար տիրապետություններից ազատագրվելու հեռանկարը կապելով Ռուսաստանի հետ, որի համար կային մի շարք նախադրյաներ.

- Ռուսաստանը, ի տարբերություն Նվրոպական երկրների, դավանափոխության խնդիր չէր դնում հայ ժողովրդի առջև:

- Յայերն արդեն մի քանի դար շարունակ առևտրա-տնտեսական ակտիվ հարաբերությունների մեջ էին Ռուսաստանի հետ:

- Պետրոս I-ի օրոք օրեցօր հզորացող Ռուսաստանը, ձգտելով աստիճանաբար ընդարձակել իր սահմանները դեպի հարավ, ռազմական հենարանի կարիք ուներ տարածաշրջանում, ուստի որոշակի հետաքրքրություն էր դրսնորում Յայսատանի նկատմամբ:

4. Չնայած Խսրայել Օրիի ազատագրական ծրագրերը կազմված էին քաղաքական և ռազմական գործի մեջ բանինացությամբ, այդուհանդերձ, ինչպես միջազգային իրադրության փոփոխությունը, այնպես էլ քաղաքական, կրոնական և տնտեսական տարարենույթ խոչընդոտները խանգարեցին դրանց իրագործմանը:

5. 1709 թ., երբ Օրիի արևմտաեվրոպական կողմնորոշումն արդեն փոխարինվել էր Ռուսականվ, կաթողիկություն ընդունելու պայմանը վերացել էր, ուստի Գանձասարի կաթողիկոսությունը, ի տարբերություն 1699 թ., այս անգամ դրական վերաբերնումը դրսնորեց Օրիի նկատմանք՝ խոստանալով աջակցել նրա ծրագրերի իրականացմանը:

6. Եսայի Յասան-Զալալյանը, հավանություն տալով Խորայել Օրիի ծրագրին և կողմնորոշվելով դեպի Ռուսաստան, փորձում էր Ռուսաստանի հայությանը և նախանձից դարձնել ազատագրական պայքարին: Միաժամանակ նա ձգուում էր բարեկամական կապեր պահպանել նաև այլ պետությունների հետ, որոնցից այս կամ այն օժանդակությունը կարելի էր ակնկալել Օրիի ծեռնարկած ծրագրի իրագործման համար: Յետևաբար, Եսայի կարողիկոսը, լինելով շրջահայաց և հնուտ հոգևորական և քաղաքական գործիչ, փորձում էր օգտագործել բոլոր հնարավոր միջոցներն ընդիմանուր նպատակի իրականացման համար:

7. Յայստանի՝ օտար բօնապետությունների միջև բաժանվածության պայմաններում Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ստիպված է եղել գործել մեծ զգուշավորությամբ՝ հայության երկու հատվածներից որևէ մեկի վիճակն էլ ավելի չվլտանգելու համար: Յենց այդ պատճառով ինչպես ռազմական գործողությունների կազմակերպման, այնպես էլ ազատագրական պայքարում արտաքին հարաբերությունների դեկավարման գործն իր վրա էր վերցրել Գանձասարի կարողիկոսությունը:

8. Ձեռնարկելով իր Կասպիական արշավանքը և հուսադրելով հայ-վրացական համատեղ զորքերին՝ “Պետրոս I-ը, այդուհանդերձ, ստիպված եղավ ընդհատել իր արշավանքը և վերադառնալ Ռուսաստան: Ստեղծված իրավիճակում արցախահայերին մնում էր հույսը զնել միայն սեփական ուժերի վրա և, ամրանալով սղնախներում, շարունակել հերոսաբար դիմադրել թշնամական ուժերին:

9. Ռուսական արքունիքը, չնայած արցախահայությանը տված բազմաթիվ խոստումներին, այդպես էլ օգնության չհասավ զինված ինքնապաշտպանության դեկավարներին, իսկ 1724 թ. հունիսի 12-ի ռուս-ռուրդական պայմանագրի կնքումից հետո ազատագրական պայքարի մասնակիցների վիճակն էլ ավելի բարդացավ: Նույնիսկ այդպիսի ծանրագույն իրավիճակում, երբ արցախահայերին հետաքրքրում էր միմիայն օգնական զորքեր ստանալու հեռանկարը, ռուսական կողմը չէր շրջանցում հայերի արտագաղթի թեման՝ ծգտելով ամեն կերպ հասնել դրա իրականացմանը: Այդուհանդերձ, ինչպես սղնախների առաջնորդները, այնպես էլ Եսայի կարողիկոսը միշտ հաստատուն կերպով դեմ են եղել հայերին գաղթեցնելու քաղաքականությանը և նույնիսկ ամենածանր ժամանակներում կողմնակից են եղել երկիրը զենքով պաշտպանելուն:

10. Եսայի Յասան-Զալալյանը համոզվել էր, որ ռուսական զինական օգնության բացակայության պայմաններում ռուսական արքունիքի կողմից այդ նպատակով արվող հավաստիացումներն ունեին հայերի դիմադրությունը երկարաձգելու միջոցով քուրքական բանակի առաջխաղացումը դեպի ռուսակապտակ տարածքները կանխելու նպատակ: Յենց այդ պատճառով Եսայի Յասան-Զալալյանը կյանքի վերջին տարիներին ապավինեց հայրենիքը սեփական ուժերով պաշտպանելու գործելակերպին:

11. Ինչպես հայկական, այնպես էլ ռուսական պատմական վավերագրերը վկայում են, որ Գանձասարի կարողիկոսը մինչև կյանքի վերջին տարիները հավատարիմ է մնացել ազատագրական պայքարի գաղափարներին: Եսայի Յասան-Զալալյանի մահից հետո էլ սղնախներից մի քանիսը շարունակեցին հերոսաբար դիմադրել քուրքական հարձակումներին՝ պահպանելով թե՛ Գանձասարի

կաթողիկոսությունը և թե՛ հայկական պետականության մարմնավորումը հանդիսացող մելիքական կառուցմերի ամբողջականությունը:

**ԱՍԵՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԻԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՍԵԹՄԵՐԸ ՄԵՐԼԿԱՅԱԳՎԱԾ ԵԾ ԻՆՂԻՄԱԿԻ ԻՆՏԿԱՅ ԻՐԱՎԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.**

- 1.Գանձասարի կաթողիկոս Եսայի Յասան-Զալալյանի գործունեության շուրջ (XVIII դ. սկիզբ), Յայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 2010, № 11, էջ 86-93:
- 2.Մայր Աթոռ Ս. Եջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունը ազատագրական պայքարի ուղեծրում, Եջմիածին, 2011, Ը, էջ 113-117:
- 3.Յայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում Խորայել Օրիի և հայ հոգևորականության համագործակցության հարցի շուրջ, Յայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 2011, № 12, էջ 124-133:
- 4.Գանձասարի կաթողիկոսություն ԺԵ դարի վերջերին և ԺԸ դարի սկզբին, Եջմիածին, 2012, Բ, էջ 94-99:
- 5.Եսայի Յասան-Զալալյանի գործունեությունը ազատագրական կոհվների վերջին փուլում, Յայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, թիվ 5 (143), մայիս, 2012, էջ 56-57:

**Կարապետյան Այկ Արսենի օրոք**

**НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯН АРЦАХА В ПЕРВЫЕ  
ДЕСЯТИЛЕТИЯ XVIII ВЕКА**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 15 июня 2012 г., в 14<sup>00</sup>, по адресу пр. Маршала Баграмяна 24/4, на заседании специализированного совета по Истории Армении

## РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена национально-освободительной борьбе армян Арцаха в первые десятилетия XVIII века.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении аргументируется научная новизна изучаемой проблемы. Далее представляются цели и задачи, затем анализируются источники и литература.

В первой главе - "Арцах в конце XVII и в начале XVIII веков" - описываются географическое положение, система управления, политическая и социально-экономическая ситуация Арцаха в исследуемом периоде, освещается деятельность меликств, которые возглавляли национально-освободительную борьбу в Арцахе. Детально анализируется тяжелое положение населения Восточной Армении в целом и Арцаха, в частности, вследствие насильственно проведенной переписи по приказу шаха Султана Хусейна, в ходе которой персидские чиновники грабили и угнетали все население Восточной Армении. В той же главе исследуется духовная жизнь Арцаха, освещаются вопросы, связанные с анти-престолом в католикosate Гандзасара, уточняются даты и обстоятельства, при которых взошли на трон католикос Еремия Хасан-Джалаян и анти-престольный католикос, Симеон Хоторашенци, и последовавшие за ними Есаиу Хасан-Джалаян и Нерсес Джрабердци.

Во второй главе - "Новый этап осуществления освободительной программы в начале XVIII века" - исследуются освободительная деятельность Исраэла Ори, встречи с высокопоставленными официальными лицами, отношения с армянскими политическими и духовными деятелями. Изучаются также политические, социально-экономические и религиозные аспекты, а также вопросы, связанные с изменением международной ситуации, помешавшие осуществлению освободительной программы Исраэла Ори. Детальным образом обсуждаются причины изменения ориентации Исраэла Ори и его сотрудничество с армянским

духовенством. Особое внимание обращено на совместные усилия Св. Престола Эчмиадзина и католикосата Гандзасара, направленные на организацию освободительной борьбы, а также шаги, предпринятые Есаиу Хасан-Джалаляном для защиты Арцаха от вражеских нападений.

В третьей главе - “Освободительные бои в Арцахе в 1722-1731 гг.” – исследуются предпосылки создания “сгнахов” и их военно-политическое значение в ходе освободительной борьбы, так и с обороной, возглавляемой Есаиу Хасан-Джалаляном, рубежей Арцаха от нападений горных кочевников в период ожидания несостоявшегося Персидского похода Петра I. Обсуждаются готовность Св. Престола Эчмиадзина и католикоса Всех Армян, Аствацатура Хамаданци, оказать всяческую помощь в организации освободительного движения, а также переговоры между руководителями освободительной борьбы в Арцахе и российским правительством. Выявлены причины заинтересованности России в оказании помощи руководителям освободительной борьбы в Арцахе. Исследуется борьба армян Арцаха против как ворвавшихся в регион горных кочевников, так и персидских и турецких войск. В конце главы изучаются деятельность Есаиу Хасан-Джалаляна в 1726-1728 гг., а также освободительные бои в 1728-1731 гг..

В заключении изложены основные итоги и выводы исследования.

**Karapetyan Hayk Harutyun**

## **NATIONAL-LIBERATION STRUGGLE OF ARTSAKH ARMENIANS IN THE FIRST DECADES OF XVIII CENTURY**

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of  
“History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on 15 June 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4)

## SUMMARY

The present dissertation is dedicated to national-liberation struggle of Artsakh Armenians in the first decades of XVIII century.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion and a list of the used sources and literature. The scientific novelty is argued in the introduction. Then intensions and assigned tasks of the dissertation are presented, and the used sources and literature are analyzed.

In the first chapter - "Artsakh at the end of XVII and at the beginning of XVIII centuries"- the geographical position, government system, political and social-economic situation of Artsakh of the researched period are presented. The activity of melikdoms, which led the national-liberation struggle in Artsakh is also featured. The hard condition of the population of Eastern Armenia in general, and Artsakh, in particular, caused by the census, forced by shah Sultan Husayn's order and during which Persian officials robbed and oppressed the population of Eastern Armenia, is analyzed in detail. In the same chapter the spiritual life of Artsakh and issues connected with the anti-throne in the Gandzasar Catholicosate are studied together with the dates and circumstances under which Catholicos Yeremia Hasan-Jalalyan and anti-throne catholicos Simeon Khotorashentsi and following them Yesayi Hasan-Jalalyan and Nerses Jraberdtsi were consecrated.

In the second chapter – "The new stage of realization of liberation programme at the beginning of XVIII century"- the liberation activity of Israel Ory, his meetings with high-ranking officials, relations with Armenian political and spiritual figures are researched. Political, social-economic, religious aspects, as well as questions connected with the change of international situation, that prevented the realization of Israel Ory's liberation programme, are also studied. The reasons of change of Israel Ory's orientation and his cooperation with the Armenian priesthood are discussed in

detail. Special attention is paid to the joint efforts of Mother See of Holy Etchmiadzin and Catholicosate of Gandzasar aimed at the organization of liberation struggle and the steps taken by Yesayi Hasan-Jalalyan to defend Artsakh from hostile invasions.

In the third chapter – “Liberation fights in Artsakh in 1722-1731”- the questions connected with preconditions of formation of “Sghnakhs” and their military-political importance in the course of liberation struggle, as well as with the defence of Artsakh, led by Yesayi Hasan-Jalalyan against mountain nomads in the period of the unrealized Persian campaign of Peter I, are analyzed. The readiness of the Mother See of Holy Etchmiadzin and the Catholicos of All Armenians, Astvatsatur Hamadantsi, to give help for organization of the liberation struggle and the negotiations between the leaders of liberation struggle in Artsakh and Russian government are discussed. The reasons for Russia’s interest in supporting the leaders of liberation struggle in Artsakh, are revealed. The struggle of Artsakh Armenians against the invasions of mountain nomads, as well as Persian and Turkish troops are researched. At the end of the chapter Yesayi Hasan-Jalalyan’s activity in 1726-1728, as well as the liberation fights in 1728-1731 are studied.

The main findings and results of the study are summarized in the conclusion.